ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՈՐԳԻԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

«ԿՈՒԽ» ԱԶԳԱՅԻՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԸՄԲՇԱՄԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԳ. 00. 01 – «Մանկավարժության տեսություն եվ պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ–2026

Ատենախոսության թեման հաստատվել է Շիրակի
Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արպատ Սանջանի Ավանեսյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Հմայակի Պետրոսյան
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Լուսինե Խաչատուրի Հայրապետյան

Առաջատար
կազմակերպություն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. փետրվարի 20-ին՝ ժամը 14^{00} -ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-Ի Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52^{Ա}, 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 21.01.2026թ. ին:

Մանկավարժության 058 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հայ ազգն ունի պատմականորեն ձևավորված իր առանձնահատկությունները: Տուրք տալով իր կենսասոցիալ, մշակութային ժառանգական ոգուն՝ հայ էթնոսը փորձում է համախմբվել հայկական լեռնաշխարհի մի հատվածում՝ պատմական Հայաստանի տարածքի՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններում: Պայմանավորված պատմական իրողություններով, աշխարհում ընթացող մարտահրավերներով և առանձնահատկություններով՝ մանկավարժական գիտության համատեքստում առաջ են գալիս նոր հարցադրումներ:

«Այսօր ազգային պատմական հիշողությունը թարմացնելու և ազգային պատկանելության զգացումը ամրակայելու և զարգացնելու խնդրում ազգային սովորույթներն ու ավանդույթները հանդես են գալիս որպես անցյալի, ներկայի և ապագայի կապող օղակ, քանի որ դրանք հայ մարդու հոգևոր աշխարհի ձևավորման կարևոր միջոց են և սերնդեսերունդ փոխանցում են նյութական, հոգևոր, հոգեբանական, բարոյաիրավական, բարոյագիտական արժեքներ», – ըստ Հ. Մ. Մախչանյանի:

Ներկայումս առաջնային է դարձել կրթության բնագավառում մարզամշակութային մարզաձևերի տարածումը և ամրապնդումը:

Առավել արդիական են դառնում ազգաբնակչության, մասնավորապես, աճող սերնդի ֆիզիկական, գեղագիտական և մտավոր հնարավորությունների զարգացման և դաստիարակության խնդիրները:

Հայ ազգային ինքնության հիմնախնդիրը ուսումնասիրվել է Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու, Ս. Ա. Զաքարյանի, Հ. Ղ. Միրզոյանի, Ն. Ս. Մովսիսյանի, Հովհան Որոտնեցու, Ս. Ս. Պետրոսյանի, Ա. Ս. Սարգսյանի և այլոց կողմից:

Ազգային դաստիարակության հիմնախնդիրները արծարծվել են հայ մշակույթի գործիչների, գրողների, պատմաբանների, մանկավարժների՝ Խ. Աբովյանի, Ս. Արզումանյանի, Հ. Գևորգյանի, Ա. Թոփուզյանի, Լ. Խուրշուդյանի, Մ. Մամուրյանի, Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Նահապետյանի, Լ. Շանթի, Ռաֆֆու, Գ. Սրվանձտյանի և այլոց աշխատություններում:

Սույն հետազոտությունը նվիրված է հայաշատ մի տարածաշրջանի, որին իրավամբ «փոքրիկ Հայաստան» են անվանում: Առաջին անգամ փորձ է արվում Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայ ազգաբնակչության շրջանակում կատարել սոցիոլոգիական ուսումնասիրություն՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նախասիրությունների, առաջնությունների և ցանկությունների վերաբերյալ՝ ամբողջության մեջ դիտարկելով հայ ժողովրդական խաղերը և գլխավորապես նրա դարերի խորքից եկած արարողակարգ՝ «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը:

Թեմայի արդիականությունը ընդգծվում է ոչ միայն գիտական առումով, այլև նաև մարզամշակույթային տեսանկյունից, քանի որ ներկայումս խնդրահարույց է ազգային և համամարդկային արժեքների պահպանությունը:

Հիմնախնդրի վերաբերյալ պատմաազգագրական, իմաստասիրական, մարդաբանական, հոգեբանական, հրապարակախոսական, մանկավարժական, գիտական գրականության, բանահյուսության, ազգային ավանդույթների ու սովորույթների

վերլուծությունը թույլ տվեց վեր հանելու հիմնախնդրի վերաբերյալ առկա տարբեր տեսանկյունների համակարգվածության աստիճանը:

Վերոգրյալով է պայմանավորված հետազոտության հիմնախնդրի պահանջվածությունը, արդիականությունը, դրա նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ:

Հետազոտության նպատակն է՝ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտն օգտագործել որպես ազգաբնակչության ֆիզիկական և գեղագիտական դաստիարակության միջոց անձի համակողմանի ձևավորման գործընթացում: Ատենախոսության նպատակն է բացահայտել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի երկու հիմնական տարատեսակների զարգացման դերը, նշանակությունը, դրանց կրթադաստիարակչական հնարավորությունները՝ ֆիզիկական և գեղագիտական զարգացման առանձնահատկությունների փոխադարձ կապի տեսանկյունից և մշակել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման ուսումնամարզական ծրագրի և օրագրի հեռանկարները Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

1. Հետազոտել «Կոխ» ազգային ըմբշամարտի և նրա պատմական տեսամեթոդական հիմքերը: Ուսումնասիրել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի պատմությունը և զարգացման ներկայիս խոչընդոտները:
2. Ուսումնասիրել և վերլուծել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ- ըմբշամարտի ուսումնամարզական գործընթացի դրվածքը Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում: Մշակել «Կոխ» հայկական ըմբշամարտի ներկայիս իրավիճակի արձանագրման, գնահատման սանդղակներ:
3. Հենվելով միջազգային փորձի վրա, հաշվի առնելով ազգային էթնիկ առանձնահատկությունները՝ մշակել ծեսի, մարզաձևի զարգացման երկարաժամկետ (12-տարվա ընդգրկումով) հեռանկարային «ճանապարհային քարտեզ» հայեցակարգ: Ներկայացնել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման հեռանկարները Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:
4. Ուսումնասիրել Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայ ազգաբնակչության նախասիրությունները, հետաքրքրությունները, ցանկությունները և առաջարկությունները «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման հեռանկարների վերաբերյալ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:

1. «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի ներդրման գործընթացը կարիք ունի վերանայման և կատարելագործման: Բացակայում են ուսումնամարզական օրինակելի ձեռնարկը, օրագիրը, մեթոդական ձեռնարկը և այլն:
2. Ուսումնամարզական օրինակելի ձեռնարկը, օրագիրը, այս մարզաձևի լայն ներդրման միջոցները, մեթոդները և դրանց կիրառման համապատասխան պայմանները:
3. «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման ուղիները Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Հետազոտության հիման վրա բացահայտվել է «Կոխ» հայկական ըմբշամարտի երկու հիմնական (արևմտահայկական և արևելահայկական) տարատեսակների պատրաստվածության ներկայիս իրավիճակը (Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի օրինակով), և մատնանշվել են նրա արդյունավետության բարձրացման ուղիները:

- Ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի ուսումնամարզական աշխատանքների դրվածքը Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:
- Տեսականորեն վերլուծվել են «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի հրատապությունը, մասնավորապես՝ կարևորությունը մատաղ սերնդի գեղագիտական, բարոյահոգեբանական, ֆիզիկական, մտավոր դաստիարակության առաջնային, կարևորագույն գործընթացում: Տեսականորեն հիմնավորվել է «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման հեռանկարային ուղիների և մոտեցումների արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՈՒՆԸ:

Սույն հետազոտության շրջանակում մասնագիտական գրականության և գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրության արդյունքներով հստակեցված են այս ազգային երևույթի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները, զարգացման հեռանկարներին փոխկապակցված խնդիրները, վեր են հանված Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում կազմակերպման ընդհանուր նախադրյալները, տեսականորեն վերլուծության են ենթարկված և բացահայտված, հիմնավորված դրա արդյունավետ լուծման մանկավարժագիտական արդի մոտեցումները: Հիմնավորվել է նաև «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման հեռանկարների առաջարկվող արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Մշակվել են «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ- ըմբշամարտի զարգացման հեռանկարները Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում. օրինակելի ծրագիր՝ 2017թ, մարզումների օրագիր՝ 2024թ. և այլն

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքով է 157 տպագիր էջ (առանց հավելվածի), այն բաղկացած է աշխատանքի ընդհանուր բնութագրից, ներածությունից, 3 գլխից, 10 ենթագլխից առաջարկություններից և եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Գրական աղբյուրների ցանկում ներկայացված է 125 գրական աղբյուր, որից 65-ը՝ հայերեն: Աշխատանքում ներառված է 7 աղյուսակ և 19 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, ներկայացված են նպատակը, խնդիրները, նորույթը, աղբյուրագիտական հիմքը, գործնական և տեսական նշանակությունը, հետազոտությունների եղանակները, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության արդյունքների հավաստիությունը, հետազոտության արդյունքների հրապարակումները, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ ««Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի տեսական մեթոդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում ներկայացվել են «Կոխ»-ի պատմաազգագրական նախադրյալները: Երկրորդ ենթագլխում վերլուծության են ենթարկվել «Կոխ»-ի տեսական-մեթոդաբանական մոտեցումները: Երրորդ ենթագլուխը նվիրված է «Կոխ»-ի էությանը և առանձնահատկություններին: Վերջին ենթագլխում հետազոտվել են Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայ ազգաբնակչության շրջանում «Կոխ»-ը որպես ազգային ինքնության ձևավորման և ուսումնահայրենասիրական դաստիարակության միջոցի անհրաժեշտությունը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում «Կոխ» ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման հեռանկարների փորձարարական հիմնավորումը»

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջինում ներկայացվել և վերլուծվել են «Կոխ»-ի ուսումնամարզական և մանկավարժական պայմանները:

Հիմնական խնդիրներն են՝

1. Պարող-ըմբիշների մոտ մշակել բարոյականություն գիտակցականություն և կայուն վարքագիծ, մարզական ու մրցակցական վարվելաձևի (էթիկայի) նորմերը:
2. Ապահովել պարող-ըմբիշների մտապաշարի պատրաստությունը:
3. Ապահովել պարող-ըմբիշների ֆիզիկական և գեղագիտական պատրաստությունը, շարժողական ընդունակությունների մշակումը:
4. Ապահովել պարող-ըմբիշների հոգեբանական պատրաստությունը, որը մարզական և մրցակցական բարձր արդյունքների հասնելու կարևոր գործոններից մեկն է:

Երկրորդ ենթագլխում հետազոտվել է պարող-ըմբիշների գեղարվեստաֆիզիկական մշակույթի զարգացման մակարդակների չափանիշները և ընդհանուր բնութագիրը: **Ավանդույթները դաստիարակչական կարևոր գործառույթներ են իրականացնում՝**

1. ստեղծագործական գործընթացում դառնում են ելակետային հիմնական սկզբունք,
2. ոգեշնչում են ստեղծագործող պարող-ըմբիշներին՝ դառնալով յուրօրինակ խթանիչ,
3. հանդես են գալիս որպես չափանիշ, որին ձգտում է մարդը իր ստեղծագործական որոնումներում:

Մեր հետազոտության մեջ մենք շեշտը դնում ենք ժողովրդական մանկավարժության ավանդույթներին՝ որպես պարող-ըմբիշների երաժշտական և պարային մշակույթի զարգացման հիմնական միջոց: Ժողովրդական մանկավարժության

հոգևոր-բարոյական ավանդույթներում արտացոլվում են ժողովրդի ինքնատիպ մտածողությունը, կենցաղը, կենսական պատկերացումները, հավատալիքները, ազգային հավաքական ինքնագիտակցությունը, իմաստասիրությունը, արժեքային ըմբռնումներն ու կատարելատիպերը: Հետևաբար, «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի մարզումների ընթացքում ժողովրդական երաժշտության ու պարի ընդգրկվածությունը՝ որպես ժողովրդի երաժշտական ու պարային ավանդույթների արտահայտություն, ոչ միայն ուսուցողական, այլև դաստիարակչական մեծ նշանակություն ունի: Ժողովրդի երաժշտական ու պարային ավանդույթների վրա հիմնված դաստիարակությունը՝ իր հուզական ներգործությամբ, բարոյական ներուժով, անհրաժեշտ է անձի երաժշտական ու պարային մշակույթի զարգացման համար:

Գեղագիտական միջավայրի ձևավորման խնդիրը մենք վերլուծել ենք՝

Ըստ միջավայրի գեղագիտական ձևավորվածության՝ որպես ընդհանուր մշակույթի դրսևորման անառարկելի պայմանի,

Գեղագիտական միջավայրում պարող-ըմբիշների ինքնադրսևորման, ինքնաճանաչման, ինքնագնահատման,

Մշակութային միջավայրի բովանդակության և պարող-ըմբիշների հոգևոր կերտվածքի, կենսաձևի, դրսևորումների համարժեքություն:

Մի շարք աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղագիտական մշակութային միջավայրի բովանդակությունը տակավին մնում է միապաղաղ, միօրինակ, պարող-ըմբիշների մշակույթի զարգացման գործընթացի արդյունավետությունը բավականաչափ մեծ չէ: Մանկավարժ-մարզիչները հստակ չեն պատկերացնում մշակույթի բովանդակության, ձևերի, պարող-ըմբիշների մեջ երաժշտական ու պարային մշակույթի զարգացման միջոցների մասին: Հարցաթերթիկն ընդգրկում է 19 հարց: Հարցերի մի մասը բացահայտում է ընտանիքում առկա մշակութային նախասիրությունները: Երկրորդ մասը թույլ է տալիս բացահայտել ընտանեկան պայմաններում մշակույթի զարգացման հիմնական միջոցներն ու մոտեցումները: Հարցերի մի խումբն ուղղված է ծնողների՝ երեխաների դաստիարակության գործում ժողովրդական ավանդույթների նշանակության գիտակցման վերաբերյալ կարծիքների դիտարկմանը: Հայկական ժողովրդական առած-ասացվածքները անձի (պարող-ըմբիշի) բարոյական և գեղագիտական դաստիարակության հզոր միջոց են: Դրանք կարճ են, դիպուկ, խորիմաստ, այս դեպքում նպաստում են պարող-ըմբիշների մտածողության և երևակայության զարգացմանը: Բանահյուսական նյութին ծանոթացնելիս մենք ընտրել ենք աշխատանքի հետևյալ ձևերը՝ ընթերցումներ, հեքիաթի հատվածային բեմականացում, դերային կատարումներ, ստեղծագործական առաջադրանքներ, այդ թվում նկարազարդում, ծեփում, փորագրում, խաղերի կազմակերպում, ամբողջական բեմականացում ազգային հեքիաթի թեմաներով (իմացական ազգային խաղեր, թեստային առաջադրանքներ), հեքիաթների թեմաների շուրջ բարոյախոսական զրույցներ, բանավեճեր: Պարապմունքների ընթացքում պարող-ըմբիշները ծանոթանում են նաև ժողովրդական կիրառական արվեստի նմուշներին, տարազին, ծեսերին, սովորույթներին: Ժողովրդական գաղափարները, հույզերը, կերպարների արտահայտչականությունը, բարոյախոսությունը ձևավորում են պարող-ըմբիշների աշխարհայացքը և

հոգևոր նկարագիրը: Վերոնշված հատկանիշները նպաստում են պարող-ըմբիշների մշակույթի զարգացմանը հետևյալ մանկավարժական պայմանների առկայությամբ՝

1. էթնոմանկավարժության ավանդույթների կիրառում, որը ներառում է ժողովրդի մանկավարժական փորձը, ընդունված արժեքները, որոնք և ձևավորում են անձի՝ (պարող-ըմբիշի) որպես տվյալ էթնոսի ներկայացուցչի էթնո-հոգեբանական առանձնահատկությունները,

2. ուսուցման այնպիսի ուղղիների կիրառում, որոնք արդյունավետ է օգտագործել 12-ից 24 սանից բաղկացած խմբերում. Այդպիսի ուղիների կիրառումն ապահովում է անհատական-տարբերակված մոտեցում,

3. մանկավարժ-մարզիչ-պարուսույցի հոգեբանա-մանկավարժական մոտեցումը՝ առարկայի իմացության, կատարողական մշակույթի, բազմապիսի ուղղիների ու աշխատաեղանակների տիրապետման բարձրորակ մակարդակի ապահովմամբ,

4. աշխատանքի նախապատրաստական, բովանդակային-գործնական և գնահատողական-ամփոփիչ փուլերի ներդաշնակություն, որը պետք է ապահովի սանի հուզական-գնահատողական վերաբերմունքը ժողովրդականի նկատմամբ՝ հուզական գնահատումից մինչև իմացական, ճանաչողական-ստեղծագործական գնահատում:

Այսպիսով, պարող-ըմբիշների մշակույթի զարգացումն իրականանում է ստեղծագործական գործունեության ընթացքում երաժշտության ու պարի աշխույժ ընկալման ունակությունների զարգացման ուղիով: Գեղագիտական գիտակցության ձևավորման գործում կարևորվում են գեղագիտական ճաշակի զարգացումը, հետաքրքրությունների, պահանջմունքների առկայությունը, քանի որ դրանցով է պայմանավորված ստեղծագործության նկատմամբ անձի (պարող-ըմբիշի) հուզական-գնահատողական վերաբերմունքի ձևավորումը: Մեր մանկավարժական երեք հարյուր քսան դիտարկումներն իրականացել են մարզումների, ցուցադրական ելույթների, մրցումների, ընդհանուր հետազոտությունների շնորհիվ: Նաև տարաբնույթ կատարումների, բեմականացումների, զրույց-բանավեճերի, քննարկումների, տարբեր միջոցառումների ընթացքում տեսական-գործնական ընդհանրացումների և մանկավարժա-հոգեբանական ու երաժշտա-պարագիտության բնագավառում առանցքային գաղափարների, առաջխաղացումների հիման վրա: Մեր կողմից բացահայտվել են անձի (պարող-ըմբիշի) մշակույթի ձևավորման առանձնահատկությունները, այս դեպքում՝ ստեղծագործական հստակեցման պայմանները:

Գոտեմարտերին մասնակցում էին նաև կանայք և աղջիկները: Մատենադարանում պահպանվող 3569 համարի ձեռագրում նկարագրվում է հայ զորահրամանատար Լիպարիտի (XII դար) քրոջ հաղթանակը, ով Սուսե քաղաքում բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ հաղթանակ տարավ եգիպտական սուլթանի սիրելի մարտիկի նկատմամբ: «Կոխ»-ը ունի բազմաթիվ տարբերակներ, հիմնականում դրանք կարելի է բաժանել 3 հիմնական խմբերի՝ ծնկների վրա կանգնած գոտեմարտ, ձեռնականգ գոտեմարտ, գոտեմարտ նժույգների վրա:

«Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը հետզհետե մուտք էր գործում ժողովրդի առօրյա կյանք, դառնում ավանդական ծես, տեղ գտնում ազգային տոնախմբություններում:

1952 թվականին «Կոխ» հայկական գոտեմարտ-ըմբշամարտը պաշտոնապես մտցվեց համամիութենական սպորտային դասակարգման և «Պատրաստ աշխատանքի ու պաշտպանության» համալիրի մեջ:

Որոշ տարածքներում այսօր էլ հարսանիքների, ծիսակատարությունների, ազգային խաղերի ժամանակ շարունակվում են գոտեմարտերը երբեմն փեսայի և հարսի եղբոր միջև:

Ըստ Հայաստանի ազգային պահոցում եղած նյութերի՝ 1948 թվականից մինչև 1987 թվականը տեղի է ունեցել «Կոխ» ազգային գոտեմարտ-ըմբշամարտի արևելահայկական տարատեսակի պաշտոնական տվյալներով 116 մրցում:

Երրորդ ենթագլխում հետազոտվել և վերլուծվել են Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում «Կոխ»-ի զարգացման առաջարկվող հեռանկարների գիտատեսական հիմնավորումը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի հանդեպ ձևավորված հայ ազգաբնակչության շրջանում փոխանակման մեխանիզմների ուսումնասիրության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտությունը»

Առաջին ենթագլխում ուսումնասիրվել են ուսումասիրությանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագրի հիմնական դրույթները: Երկրորդ ենթագլխում հետազոտվել է ուսումնասիրության վերաբերյալ սոցիալական հետազոտության արդյունքների վերլուծությունը:

Վիճակագրական վերլուծություն

Մեր կողմից Սամցխե-Ջավախքի հայ ազգաբնակչության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ու մշակույթի բնագավառում ունեցած պահանջմունքների, հետաքրքրությունների և ցանկությունների բացահայտմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծություն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Սամցխե-Ջավախքի հայ ազգաբնակչության պահանջմունքների, հետաքրքրությունների և ցանկությունների բացահայտմանն ուղղված հետազոտությունն իրականացվել է 406 հարցվողների շրջանում, որի նպատակը հնարավորինս ճիշտ, պահանջված ռազմավարության մշակումն է Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման բնագավառում և մասնավորապես հայ ազգաբնակչության շրջանակում «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամատի զարգացման ուղիների և միջոցների բացահայտումը: Հետազոտության հիմնահարցի նպատակից և խնդիրներից ելնելով՝ անդրադառնալով «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի դերի ու նշանակության բարձրացմանը, նրա զարգացման հեռագծապատկերներին և խոչընդոտներին՝ կարող ենք նշել, որ հարցվողների 31%-ը տարեց մարդկանցից լսել է, որ հայերը հնուց ի վեր ունեցել են իրենց ազգային գոտեմարտ-ըմբշամարտը, 22%-ը այս մասին տեղեկություն չունի, 15.8%-ը մրցումներ է դիտել, ինչի արդյունքում տեղեկացել է, 16,8%-ը կարդացել է այդ մասին գրքերից, 12.2%ը ֆիլմերից է տեղեկացել: Հենց այն խումբը հարցվողների, ովքեր տեղյակ են, որ գոյություն ունի ազգային գոտեմարտ-ըմբշամարտ, առանձնացրել է նաև ազգային գոտեմարտ-ըմբշամարտի այն տեսակները, որոնց նրանք ծանոթ են. 39.7%-ը ծանոթ է եղել Ջիդաոբա, 3,4%-ը

ծանոթ է Սումոյին, 3.4%-ը «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտին: Կարելի է եզրակացնել, որ «Կոխ»-ը որպես ազգային գոտեմարտ-ըմբշամարտի տարատեսակ այդքան էլ հայտնի չէ տեղի հայ ազգաբնակչությանը, ինչը հիմնավորվում է մի քանի պատճառներով՝ 40%-ը գտնում է որ ՀՀ բարձրագույն ղեկավարության անտարբերությունն է պատճառը, 22.4%-ը, որ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակն է պատճառը, 25.9%-ը որպես պատճառ նշում է բարերարների ոչ պատշաճ ուշադրությունը, 23.7%-ը քարոզչական աշխատանքի թերացումներն է առանձնացնում, 16.8%-ը այս տեսակի ըմբշամարտի պահանջվածության պակասի մասին է վկայում, 8.3%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին, 0.2%-ը գտնում է, որ չկա համախմբվածության համապատասխան մակարդակ, 0.2%-ը, որ օտարում կա, 0.2%-ը անտարբերությունն է որպես պատճառ շեշտում, 0.2%-ն էլ՝ համապատասխան մասնագետների պակասը: Այնուամենայնիվ, հարցվողների այն խումբը, ովքեր ծանոթ են ազգային գոտեմարտ-ըմբշամարտի այս ձևին, առանձնացնում են «Կոխ»-ի երկու տեսակներ. 33.1%-ը ծանոթ է «Լոռվա» (արևելահայկական) «Կոխ»-ին, 22.7%-ը «Շիրակի» (արևմտահայկական) «Կոխ»-ին: Անդրադառնալով «Կոխ»-ի զարգացման հեռագծապատկերներին հարկ է շեշտել, որ հարցվողների 70%-ը դրական է գնահատել այն միտքը, որ «Կոխ»- ը նպաստում է հայ ըմբիշների միջազգային հարթակում հաջողություններին, 16.1%-ը այդ երկու գործոնների միջև կապ չի տեսնում:

«Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման որոշակի տարբերակներ են առանձացվում, որոնք այն հայտնի կդարձնեն ինչպես տեղական միջավայրում, անպես էլ միջազգային հարթակում՝ Սփյուռքի հայհամայքներում (հարցվողները մեծամասամբ նշում են, որ անրահրաժեշտ է մրցումներ կազմակերպել ՀՀ տարբեր մարզերում - 63%, 67,7%-ը գտնում է որ այն պետք է ներառել համահայկական խաղերի ծրագրում, 52.1%-ը «Կոխ»-ի որպես ազգային գոտեմարտ-ըմբշամարտի տեսակի հանրայնացման համար գտնում է, որ այն ճիշտ է ներառել հիմնական դպրոցի հանրակրթական ծրագրում և 75.5%-ի կարծիքով այն պետք է դուրս բերել նաև միջազգային հարթակ՝ մասնավորապես տարածել Սփյուռքի գաղթօղաջներում)[1]:

Երրորդ գլխում հատկացված է «Կոխ»-ի զարգացման ուսումնամարզական փոր-ձարարական ծրագրի և կատարելագործման խմբերում պարող-ըմբիշի ուսում-նամարզական փորձարարական անհատական օրինակելի օրագրի նկարագրի վերլուծությանը:

Ներկայումս մարզման բնագավառում կիրառվում են՝

1. Ֆիզիկական վարժություններ, որոնք բաժանվում են երեք հիմնական խմբի՝ ընդհանուր պատրաստության, հատուկ պատրաստության և մրցակցական:

Ընդհանուր նախապատրաստական վարժությունները նպաստում են ապահովել պարող-ըմբիշների համակողմանի ֆիզիկական պատրաստությունը, որի գլխավոր ուղղվածությունն է՝ մշակել տարբեր շարժողական ընդունակությունները և բարձրացնել պարող-ըմբիշների աշխատունակությունը:

[1] Ատենախոսության մեջ ներառված տվյալները մշակվել են SPSS 27 ծրագրով, վիճակագրա-կան վերլուծությունը ներկայացված է 7 աղյուսակի և 14 գծապատկերի տեսքով:

Հատուկ պատրաստության վարժությունները նպատակաուղղված են տեխնիկայի ամրապնդմանը և կատարելագործմանը ու յուրահատուկ շարժողական ընդունակությունների մշակմանը:

Մրցակցական վարժությունները մարզաձևին բնորոշ շարժողական գործողությունների համալիրն են, որը մրցման առարկան է:

Վերականգնման միջոցներ.

Մարդու հետաքրքրությունները վկայում են նրա հոգևոր հարստության և լիարժեք կենսակերպի մասին: Հիմնախնդրի վերաբերյալ հետազոտություններում լայնորեն օգտագործվում է նաև «պահանջմունք» հասկացությունը, որը տարբեր հեղինակների կողմից յուրովի է մեկնաբանվում: Իմաստասիրական և հոգեբանական գրականության մեջ «պահանջմունք» հասկացության տարբեր բնորոշումների վերլուծության հիման վրա Ն. Վ. Կուչևսկայան առանձնացնում է հետևյալ 3 խմբերը՝ պահանջմունքը՝ որպես կարիք (Բ. Մ. Տեպլով), պահանջմունքը՝ որպես օրգանիզմի պահանջ (Բ. Գ. Անանև) և պահանջմունքը՝ որպես աշխարհի նկատմամբ նոր հարաբերություն (Վ. Ն. Մյասիշչև):

Տեղեկատվական ենթահամակարգը ներառում է երաժշտության մասին գիտելիքները: Դրանք ընդգրկում են նաև երաժշտական զգացումները, ընկալումները, պատկերացումները, ըմբռնումները, հայացքները: Այդ բոլորը մարդու երաժշտական գիտակցության մեջ արտացոլվող երևույթներն են, որոնք կազմում են երաժշտական արվեստի աշխարհը, նրա առանձնահատկությունները, հարաբերությունները: Անգամ տարրական կրթության համակարգում ժողովրդական ավանդույթների դերի ու նշանակության, էթնոմանկավարժության գործառույթների (կրթական, գնահատողական, իմացական-ճանաչողական և այլն) հարցերը պարող-ըմբիշների երաժշտական մշակույթի տեսանկյունից: Դա ազգային ինքնագիտակցության և ժողովրդական ավանդույթների նկատմամբ հուզական-գեղագիտական հարաբերությունների զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում:

Ավանդույթները կարելի է դիտարկել և՛ որպես միջոց, և՛ որպես ուղի, և՛ դաստիարակության եղանակ: Ավանդույթները, արմատավորվելով աճող սերնդի կենսագործունեության մեջ, դառնում են դաստիարակչական համակարգի բաղադրատարրերից մեկը: Ժողովրդական ավանդույթների օգտագործման գործընթացն անխուսափելիորեն դառնում է դաստիարակչական համակարգի կարևոր գործառույթներից մեկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրված գրական աղբյուրները, սոցիոլոգիական հարցման, ինչպես և վիճակագրական ու հետազոտական տվյալների վերլուծությունները մեզ հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը հնագույն մարզաձևերից է, որը տասնյակ դարերի ընթացքում փոփոխության է ենթարկվել: Գրեթե բոլոր «հնագույն անտիկ» էթնոսները ձևավորվելով դարերի ընթացքում պատմական անհրաժեշտության պայմաններում ստեղծել են իրենց նկարագրին համահունչ, առավել բնորոշ ազգային ըմբշամարտի տեսակը կամ տարատեսակները:

2. Պատմական փաստերը վկայում են, որ նույն էթնոսը, բնակվելով տարբեր տարածաշրջաններում, ստեղծել է ազգային գոտեմարտ-ըմբշամարտի մի քանի տարատեսակներ, որոնք տարբերվել են անգամ գոտեմարտելու հագուստով և մրցականոններով: Հայ ժողովրդի օրինակը վերոնշվածի վառ ապացույցներից մեկն է: «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը հայ ժողովրդի ծնունդն է, նրա ընդհանուր և միասնական պատմության անբաժանելի կարևոր մասերից մեկը, նրա արժանապատվության, ինքնասիրության գրավականը:

3. Ինչպես հայ ժողովրդի լեզվական բարբառները, այնպես էլ «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը ունեցել են տարբերակումներ: Օրինակ՝ դասական իմաստով արևմտահայկական (Շիրակի) ու արևելահայկական (Լոռվա) և ուղղակի իմաստով Նախիջևանի, Զանգեզուրի, Արցախի, Ջավախքի և այլ հայկական ու ոչ հայկական, բայց բնակեցված հայերով պատմական տարածաշրջանների:

4. «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը ինչպես և հայ առաքելական եկեղեցին, դարերի ընթացքում գոյատևել է ազգային պետականության բացակայության պայմաններում, կատարել է համախմբման, ազգային դիմագծի պահպանության կարևորագույն առաքելություն: Մեծ իմաստով «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը առաջին հերթին ազգային ինքնության, աշխարհով մեկ սփռված հայության առջև առաջացած խնդիրներից մեկն է, ավանդական մշակույթի միջոցով հնարավոր է իրականացնել ազգի համախմբման վեհ գաղափարի իրականացումը:

5. Անառարկելի է՝ անձի զարգացման գործընթացում կարևոր դեր են խաղում բազմաթիվ սերունդների կողմից մշակված ազգային ավանդույթները, սովորույթները, այդ թվում խաղերը, մրցաձևերը, որի համադրումն է «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտն իր տարատեսակներով:

6. Մանկավարժական դիտումների արդյունքում բացահայտվել են ուսումնամարզական գործընթացում առանցքային մոտեցումների բազմազանության և հրատապության խնդիրները:

7. Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախքի տարածրջանում սոցիոլոգիական հարցման արդյունքների հիման վրա բացահայտվել է «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի արդի զարգացման ուղիների և միջոցների անհրաժեշտությունը Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում, Հայաստանում, հայկական գաղթօջախներում:

8. Գտնում ենք, որ «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի ներգործության բացահայտումները Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայ ազգա-

բնակչության կրթադաստիարակչական գործընթացում կարիք ունի հետագա շարունակական հետազոտությունների:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ելնելով «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի ներկայիս անմխիթար վիճակից, ինչպես նաև աշխատանքում տեղ գտած տեսական և գործնական նշանակություններից, անհրաժեշտ ենք համարում կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի ու սպորտի նախարարություն, նաև համապատասխան անունը կրող ֆեդերացիային, որպեսզի պարբերաբար կազմակերպվի և անցկացվի Հայաստան–Սփյուռք համատեղ համաժողովներ, գիտաժողովներ, տեսագործնական սեմինար-դասընթացներ շահագրգիռ անձանց մասնակցությամբ:
2. Հարց բարձրացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի ու սպորտի նախարարության առջև, որպեսզի «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը ընդգրկվի Հայաստանի և Սփյուռքի հայկական հիմնական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի առարկայի ծրագրում:
3. Ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի և նախարարություն՝ «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը ընդգրկելու Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում որպես առանձին ինքնուրույն մասնագիտացում:
4. Այս խնդրահարույց թեմայի շուրջ առաջարկել Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչություններին և նախարարություններին հիմնել «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի մարզամշակութային մասնագիտացված մարզադպրոց:
5. Հաշվի առնել այս ուղղությամբ միջազգային առաջատար փորձը, ներգրավել արտերկրից համապատասխան մասնագետներ՝ հիմնելով «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի համահայկական ակադեմիա:
6. «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը հասանելի դարձնել այլ ժողովուրդների համար:
7. Ձեռնարկել օժանդակող համապատասխան միջոցառումներ, որպեսզի երկրի ներսում և նրա սահմաններից դուրս հանրության շրջանում «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտը իր պատվավոր տեղը զբաղեցնի ու դառնա Հայ էթնոսի խորհրդանիշներից և ներկայանա որպես այցեքարտ, ինչպես «Ծիրանափողն» է համաշխարհային երաժշտարվեստում:
8. Հիմնել համահայկական հիմնադրամ՝ «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման, տարածման նպատակով:
9. Աշխատանք տանել՝ մշակելու «Կոխ» հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի զարգացման և տարածման հայեցակարգ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. Մեր նախնիների կտակը՝ «Կոխ» հայկական ազգային ըմբշամարտ ՀՀԿԳՆ Կրթության Ազգային Ինստիտուտ Գիտամեթոդական ամսագիր. Մանկավարժություն: Երևան: № 2, 2016.– էջ 48-53:

2. Армянская национальная борьба “Кох” в качестве эффективного средства физического воспитания: (на примере региона Джавахетии). Армянско-Российский Международный университет “Мхитар Гош” учебно-методические статьи. Ереван: 2016.– С. 297-302.

3. Формирование личности средствами Армянской национальной борьбы “Кох” и педагогическое мастерство тренера. «Научно- образовательный комплекс Татев», журнал Педагогическая мысль, N. 1-2 (60-61), Ереван, 2016.– С. 162-167.

4. Армянская национальная борьба «Кох» как спортивно-культурное явление и эффективное средство формирование личности: (на примере Джавахетского региона). «Молодой Ученый» международный научный журнал №48 (182). Казань: 2017.– С. 219-223.

5. Сравнительный анализ показателей соревновательной деятельности танцоров-борцов западно-армянского и восточно-армянского стилей: (на примере Джавахетского региона). "Научно-образовательный комплекс Татев", журнал Педагогическая мысль, №3-4(66-67). Ереван: 2017.– С.103-106.

6. Специальная силовая подготовка танцоров-борцов Армянской национальной борьбы «Кох»: (западно-армянской разновидности). «Ванадзорский Государственный Университет имени Ованеса Туманяна. Научные ведомости. Выпуск-Б. Ванадзор: 2017.– С. 164-172.

7. Особенности и оценка соревновательной деятельности Армянской Национальной борьбы «Кох»: (на примере Джавахского региона), Армянский государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна. Журнал Научное периодическое издание межвузовского консорциума «Проблемы педагогики и психологии» №2. Ереван: 2017.– С.144-154.

8. Փրկենք մոռացությունից «Կոխ» հայկական ազգային ըմբշամարտը : ՀՀ ԿԳՆ, Կրթության Ազգային Ինստիտուտ, Գիտամեթոդական ամսագիր «Մանկավարժություն», №5. Երևան: 2017.– էջ 61-64:

9. Экспериментальный индивидуальный спортивный дневник как эффективное средство подготовки танцоров-борцов в армянской национальной борьбе «Кох». Образование и Воспитание. Международный научный журнал № 4(19), Казань: 2018.– С.70-72.

10. Культурно-спортивное искусство борьбы «Кох» как средство формирования всесторонне и гармонично развитой личности. Физическая культура: воспитание, образование, тренировка. Научно-методический журнал №4. Москва: 2019.– С.76-79.

11. Элементы армянской национальной борьбы «Кох» как эффективное средство внедрения этнопедагогики в программу основной школьной системы образования. Современные вопросы биомедицины. Электронный сетевой научно-образо-

вательный журнал том 4, №3 (Северо-Кавказский федеральный научно-клинический центр ФМБА России). Ессентуки: 2020.

12. Национальная борьба «Кох» как устойчивый элемент традиционной этнокультуры армян: (на примере Самцхе-Джавахского региона). «Образование и воспитание». Международный научно-методический журнал №3(34). Казань: 2021.– С. 42-45.

13. Концепция общей (разносторонней) подготовки молодежи в процессе обучения основным (базисным) элементам армянской национальной борьбе Кох в экспериментальной (специализированной) школе: (на примере региона Джавахети, Грузия) Международный научный журнал. «Молодой ученый» №17(412). Казань: 2022.– С.323-330.

14. Спортивные разнообразные игры-состязания на занятиях Армянской национальной борьбой «Кох» (на примере Самцхе-Джавахетского региона). UNIVERSUM. Психология и образование научный журнал. Выпуск: 6(96). Москва: изд. ООО «МЦНО», 2022.– С.14-18.

15. Психолого-педагогические особенности культурно-спортивной организации деятельности танцоров-борцов (на примере Армянской национальной борьбы «Кох»). «Северо-Кавказский федеральный университет». Образование и глобальные вызовы современности: научно-педагогический контекст. Сборник научных трудов. Ставрополь: изд-во «СКФУ», 2022.– С.93-98.

16. Концепция дидактических особенности организации технико-тактического совершенствования танцоров-борцов: (в модели Армянской национальной борьбы «Кох»; на примере Самцхе-Джавахетского региона). Международный научный журнал «Флагман науки» №3(3). Санкт-Петербург: 2023. – С.305-315.

17. Танцор-борец как субъект этнокультуры-этнопедагогики. (на модели этносостязания Армянской национальной борьбы «Кох»; на примере Самцхе-Джавахетского региона). Մանկավարժական միտք, № 1-2 Երևան: «Զանգակ», 2023. - էջ 28-34:

18. Единство и взаимодействия физического и эстетического воспитания танцоров-борцов: (на модели Армянской национальной борьбы «Кох»; на примере Самцхе-Джавахетского региона). Международный научный электрони журнал // «Вектор научной мысли». Выпуск №1(6).– Санкт-Петербург: изд. «МИПИ» им. Ломоносова, 2024.

19. Science in sport: modern issues (Scientific and methodical journal), 2024, № 1 (11), 12-22, Yuzbashyan Khachatur G. - Forms, ways and means of revealing the levels of development of the culture of dancer-wrestlers of the national wrestling "Kokh" (on the example of the Samtskhe-Javakheti region).

20. Теория армянской национальной борьбы «Кох» как категория ценности и основа формирования личности (танцора-борца): /педагогический и социально-философский аспект/. Евразийский научный журнал. № 6 (Июнь). Санкт-Петербург: изд-во, «Редакция Евразийского научного журнала». 2025. – С. 14-17. Адрес страницы в сети интернет, публикации: lournalPro.ru

Ուսումնամեթոդական աշխատանքներ

21. «Կոխ» հայկական ըմբշամարտի ուսումնամարզական փորձարարական ծրագիր (Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի օրինակով) – Երևան: «Աստղիկ գրատուն», 2017.– 52 էջ:

22. «Կոխ» Հայկական ազգային գոտեմարտ-ըմբշամարտի ուսումնամեթոդական փորձարարական ձեռնարկ: - Երևան: 2022.– 650 էջ: (https://arar.sci.am/dlibra/publication/419502)

23. Положения, концепции формирования и развития Армянской национальной борьбы «Кох» в Армении и странах (ближнего и дальнего) зарубежья. – Ахалкалак: 2023.– 67с. «Лицензионный договор №499-06/2023К, (непериодические издания) г. Москва, от 22 июня 2023г.», сайт – http://elibrary.ru. НЭБ.

24. Почти все об Армянской национальной борьбе «Кох»: (учебно-методическое пособие). [Электронная книга]. – Ереван: «Авторское издание», 2024.– 301с. https://armunicat.nla.am/cgibin/koha/opacdetail.pl?biblionumber=2013553

25. Կատարելագործման խմբերում պարող-ըմբիշի ուսումնամարզական փորձարարական անհատական օրինակելի օրագիր (Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի օրինակով): Ուսումնամեթոդական ուղեցույց: – Երևան: 2024.– 43, Ի-էջ, համացանցային հղում՝ https://arar.sci.am/dlibra/publication/411017

ЮЗБАШЯН ХАЧАТУР ГЕОРГИЕВИЧ

Перспективы развития национальной борьбы «Кох» в Самцхе-Джавахетском регионе по армянскому этнопедагогическому контексту (на примере исследования национальной борьбы «Кох»).

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. – «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 20-го февраля 2026года в 14^{00} на заседании специализированного совета 058 Педагогике Комитета по высшему образованию и науке РА, действующем при Ереванском Государственном Университете.

Адрес: РА, 0025, г. Ереван, улица Абовяна 25А, корпус 8 ЕГУ, аудитория 208.

РЕЗЮМЕ

Актуальность темы.

В связи с историческими реалиями, вызовами и современного мира и особенностями развития педагогической науки возникают новые вопросы, требующие изучения.

«Сегодня в деле обновления национальной исторической памяти, укрепления и развития чувства национальной принадлежности национальные обычаи и традиции выступают как связующее звено между прошлым, настоящим и будущим, поскольку они являются важным средством формирования духовного мира армянина и из поколения в поколение передают материальные, духовные, психологические, нравственно-правовые и этические ценности», — по мнению Г. М. Махчаняна.

В настоящее время распространение и укрепление спортивно-культурной деятельности в сфере образования становится приоритетным направлением.

Вопросы развития и воспитания физических, эстетических и интеллектуальных возможностей населения, особенно подрастающего поколения, приобретают все большую актуальность.

Проблему армянской национальной идентичности исследовали Григор Магистрос, Григор Татеваци, С.А. Закарян, Г.Г. Мирзоян, Н.С. Мовсисян, Ован Воротнеци, С.С. Петросян, А.С. Саргсян и другие.

Проблемы национального воспитания поднимались в трудах армянских деятелей культуры, поэтов, историков и педагогов: Х. Абовяна, С. Арзуманяна, Г. Геворгяна, А. Топузяна, Л. Хуршудян, М. Мамуряна, Ст. Назаряна, М. Налбандяна, Р. Наапетяна, Л. Шанта, Раффи, Г. Срвандзтянца и других.

Данное исследование посвящено региону с многочисленным армянским населением, который по праву называют «Малая Армения». Впервые предпринимается попытка провести социологическое исследование среди армянского населения региона Самцхе-Джавахети по вопросам физкультурно-спортивных предпочтений, чемпионатов и желаний. Особое внимание уделяется армянским народным играм в их полном объёме, а также многовековому ритуалу – армянской национальной борьбе «Кох».

Актуальность темы обусловлена не только с научными интересами, но и спортивными и культурными аспектами: сохранение национальных и общечеловеческих ценностей в современном мире является важной проблемой.

Все вышеизложенное подтверждает востребованность, актуальность, новизну исследования, а также его теоретическую и практическую значимость для развития науки и культуры.

Цель исследования

Использовать армянскую национальную борьбу "Кох" в Самцхе-Джавахети в качестве средство физического и эстетического воспитания населения в процессе всестороннего формирования личности.

Задача исследования.

1. Исследовать национальную борьбу "Кох" и ее историко-методологические основы.
2. Изучить историю развития борьбы "Кох" и современные препятствия.
3. Проанализировать организацию учебно-тренировочного процесса борьбы "Кох" в регионе Самцхе-Джавахети.
4. На основе международного опыта и с учетом национально-этнических особенностей разработать перспективную концепцию развития борьбы "Кох" на 12 лет.
5. Изучить предпочтения, интересы, пожелания и предложения армянского населения региона Самцхе-Джавахети по развитию борьбы "Кох".
6. Разработать шкалы фиксации и оценки текущего состояния борьбы "Кох".
7. Представить перспективы развития борьбы "Кох" в Самцхе-Джавахети.

Научная новизна исследования.

В результате исследования выявлено текущее состояние подготовки двух основных видов борьбы "Кох" (восточноармянского и западноармянского) на примере региона Самцхе-Джавахети, а также определены пути повышения их эффективности. Кроме того, изучена и проанализирована организация учебно-тренировочных мероприятий по борьбе "Кох" в данном регионе.

Теоретическая значимость.

В рамках исследования уточнены особенности и проблемы национального явления "Кох", обозначены взаимосвязанные задачи его развития, выявлены предпосылки для организации в регионе Самцхе-Джавахети. Теоретически обоснованы современные педагогические подходы к решению проблем, а также предложены эффективные перспективы развития борьбы "Кох".

Практическая значимость.

Разработаны:

- Перспективная программа развития борьбы "Кох" (2017 г.);
- Тренировочный дневник (2024 г.);
- И другие методические материалы.

Структура и объем диссертации.

Объем диссертации составляет 157 страниц компьютерного набора (без приложений). Она включает общую характеристику работы, введение, три главы, заклю-

чения, выводы и предложения, а также список литературы, содержащий 125 источников, из них 65 - на армянском языке. В работе представлены 7 таблиц и 19 схеми. Объём приложений составляет 138 компьютерных страниц.

Работа завершается общими выводами.

Основные результаты исследования опубликованы в 20 научных статьях.

Общий объем публикаций по теме диссертации – 77,1245 печатных листов.

YUZBASHYAN G.KHACHATUR

Prospects for the Development of the National Wrestling "Kokh" in the Samtskhe-Javakheti Region within the Context of Armenian Ethnopedagogy (Based on the Study of the Natinal Wrestling "Kokh").

The dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.01 – "Theory and History of Pedagogy".

will be defendid on the 20th of february, 2026, at 14^{00} o'clock at the sessions of Specialized Council 058 on Pedagogy of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, Aboyyan St. 52a, 8th building of Yerevan State University, room 208.

Auditorium №

RESUME

THE TOPICALITY OF THE RESEARCH.

Due to historical realities, challenges and peculiarities in the world, new questions arise in the context of pedagogical science.

"Today, in the process of revitalizing national historical memory and strengthening and developing the sense of national identity, national customs and traditions serve as a connecting link between the past, present, and future, as they are an important means of shaping the spiritual world of the Armenian people and transmitting material, spiritual, psychological, moral-legal, and ethical values from generation to generation", according to H. M. Makhchanyan.

Currently, the spread and strengthening of sports and cultural sports in the field of education has become a priority.

The problems of developing and educating the physical, aesthetic and intellectual capabilities of the population, in particular, the growing generation, are becoming more relevant.

The problem of Armenian national identity has been studied by Grigor Magistros, Grigor Magistros, Grigor Tatevatsi, S.A. Zakaryan, H.Gh. Mirzoyan, N.S. Movsisyan, Hovhan Vorotnetsi, S.S. Petrosyan, A.S. Sargsyan and others.

The problems of national education have been raised in the works of Armenian cultural figures, poets, historians, and educators: Kh. Abovyan, S. Arzumanyan, H. Gevorgyan, A. Topuzyan, L. Khurshudyan, M. Mamuryan, St. Nazaryan, M. Nalbandyan, R. Nahapetyan, L. Shant, Raffi, G. Srvandztyants and others.

This research is dedicated to a region with a large Armenian population, which is rightly called "Little Armenia". For the first time, an attempt is made to conduct a sociological study within the Armenian population of the Samtskhe-Javakheti region on physical culture and sports preferences, championships and desires, considering Armenian folk games in their entirety and mainly their centuries-old ritual, the Armenian national wrestling "Kokh".

The relevance of the topic is emphasized not only from a scientific point of view, but also from a sports and cultural point of view, since the preservation of national and universal values is currently problematic.

The analysis of historical-ethnographic, philosophical, anthropological, psychological, publicistic, pedagogical, scientific literature, folklore, national traditions and customs on the issue allowed us to reveal the degree of systematization of the existing different perspectives on the issue.

The above is due to the demand, relevance, novelty, theoretical and practical significance of the research problem.

THE AIM AND TASKS OF THE RESEARCH.

The aim of the research is the use of the Armenian national wrestling "Kokh" in the Samtskhe-Javakheti region as a means of physical and aesthetic education in the comprehensive development of the individual.

Tasks:

1. Investigate the national wrestling "Kokh" and its historical-methodological foundations.
2. Study the history and current obstacles to the development of "Kokh."
3. Analyze the organization of the training process for "Kokh" in the Samtskhe-Javakheti region.
4. Based on international experience and national ethnic characteristics, develop a long-term (12-year) strategic roadmap for the development of "Kokh."
5. Examine the preferences, interests, wishes, and suggestions of the Armenian population regarding the development of "Kokh."
6. Develop assessment and recording scales for the current state of "Kokh."
7. Present the development prospects of "Kokh" in the Samtskhe-Javakheti region.

THE SCIENTIFIC NOVELTY OF THE RESEARCH.

The research revealed the current state of preparation of the two main types of "Kokh" (Eastern and Western Armenian) based on the Samtskhe-Javakheti example and outlined ways to improve their effectiveness.

The organization of "Kokh" training activities in the region was studied and analyzed.

THE THEORETICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH.

The research clarified the specific features and problems of the "Kokh" phenomenon, outlined development challenges, and identified organizational prerequisites in the Samtskhe-Javakheti region. Theoretical analysis highlighted effective modern pedagogical approaches.

THE PRACTICAL IMPORTANCE OF THE RESEARCH.

Programs developed include:

- Example training program (2017);
- Training diary (2024);
- Other methodological tools.

STRUCTURE AND VOLUME OF THE RESEARCH.

Volume — 157 pages (computer typed, excluding appendices). The work consists of a general description, introduction, 3 chapters, conclusions and recommendations, a bibliography (125 sources, including 65 in Armenian), and includes 7 tables and 19 charts.

The thesis ends with the general conclusions.

The main results of the research have been published in 20 scientific articles.

The total volume of publications on the topic of the dissertation is 77,1245 printed pages.